ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ

04.07.2024 22:22

Փաստաբանական ակադեմիայի 76 շրջանավարտի այսօր շնորհվել է փաստաբանական գործունեության արտոնագիր:

Արտոնագրման արարողությունը մեկնարկել է Հայաստանի Հանրապետության օրհներգի ներքո:

Ողջույնի խոսքով և հավակնորդներին ուղղված շնորհավորական ուղերձներով հանդես են եկել նաև Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը:

Ամբիոնից հավակնորդներին շնորհավորել են նաև Փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Գայանե Դեմիրչյանը և Կարեն Մեժլումյանը:

Փաստաբանության ոլորտում առաջին բարդ խնդիրը հաղթահարած՝ Փաստաբանական ակադեմիան հաջողությամբ ավարտած շրջանավարտները, այսօր հավակնորդի աթոռից սպասում էին փաստաբանական համայնքին միանալու և մասնագիտական սկզբունքներին հավատարիմ լինելու երդման իրենց հերթին:

Մինչ Փաստաբանների պալատի արտոնագրերի շնորհման խորհրդի հանդիսավոր նիստի մեկնարկը, շնորհակալական խոսք են հղել նաև հավակնորդներ Գրիգոր Չապանյանը և Ջարինե Ոսկանյանը՝ երկուստեք նշելով, որ փաստաբանական համայնքին միանում են ամենայն պատասխանատվությամբ և մասնագիտական գործունեությունն իրականացնելիս լինելու են երդմանը հավատարիմ:

Այնուհետև, ելույթներին հաջորդել են փաստաբանների հանդիսավոր երդման և արտոնագրերի հանձնման պաշտոնական արարողությունները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })